ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին

№ 16

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

Посвящается 50-летию основания факультета востоковедения ЕГУ

№ 16

Ереван
Издательство ЕГУ
2019

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES

Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty of Oriental Studies of YSU

№ 16

YEREVAN
YSU PRESS
2019

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Դավիթ Հովհաննիսյան
8-9-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 9-22

Վահե Հակոբյան
ԻՍԹԻՀՍԱՆԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ 23-34

Ռուբեն Միրաքյան,Հարություն Մաթևոսյան
ՈՒՍԱՄԱ ԲԵՆ ԼԱԴԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՋԻՀԱԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ 35-47

Անդրանիկ Հարությունյան
«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋ 48-60

Թյուրքագիտություն

Ավետիք Հարությունյան
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 61-75

Հայկ Դարբինյան
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 76-87

Մարիամ Մելքոնյան
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆԵՋԱԹԻ ԵՎ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆ 88-96

Արթուր Միրզոյան
ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 97-108

Տաթևիկ Սարգսյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (SOCAR) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 109-119

Սամվել Ռամազյան
«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 120-152

Իրանագիտություն

Արտյոմ Տոնոյան
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ (ԹԱԹԵՐԵՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. 153-160

Լիանա Պետրոսյան
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2009 ԹԹ.) 161-171

Շուշաննա Գալստյան
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՀՐԵՅՆ 172-180

Աննա Գևորգյան
«ՄԱՐՋԱՅԵ ԹԱՂԼԻԴԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ 181-191

Հասմիկ Բիանջյան
ԽԱՂԱՆԻԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ 192-198

Հովհաննես Խորիկյան
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XX ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 199-209

Անի Նահապետյան
ԱՌԱՋԻՆ ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 210-223

***

Ամալյա Գրիգորյան
ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿ. ԱՌԱՍՊԵ՞Լ, ԹԵ՞ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 224-229

Տիգրան Գրիգորյան
«ՃԱՆԿՈՂ ԱՐԾԻՎԸ» ԵՎ «ԵՐԿՆԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ 230-247

CONTENT

Arabic Studies

Davit Hovhannisyan
ARAB WORKS OF THE 8-9TH CENTURIES AS A SOURCE FOR THE STUDY OF ADAPTATION PROCESSES 9-22

Vahe Hakobyan
ISTIHSAN IN SUNNI MAZHABS AND ITS ADAPTATION 23-34

Ruben Mirakyan, Harutyun Matevosyan
THE DECLARATION OF JIHAD AGAINST AMERICANS BY OSAMA BIN LADEN 35-47

Andranik Harutyunyan
THE TRANSFORMATION OF THE FOREIGN POLICY OF THE STATE OF QATAR IN THE THREE SEA SYSTEM 48-60

Turkic Studies

Avetik Harutyunyan
THE ROLE OF MILITARY IN FOREIGN POLICY DECISION MAKING IN TURKEY IN 1990's 61-75

Hayk Darbinyan
THE PERCEPTION OF DIPLOMACY BY OTTOMANS AND ITS PRACTICE IN THE CONTEXT OF EXTERNAL WORLD 76-87

Mariam Melkonyan
REFLECTION OF GENDER CONTRADICTIONS IN DIVAN LITERATURE: NEJATI AND MIHRI HATUN 88-96

Arthur Mirzoyan
COMPARATIVE ANALYSIS OF CONTEMPORARY ARMENIAN AND AZERBAIJANI POETRY 97-108

Tatevik Sargsyan
THE ACTIVITIES OF STATE OIL COMPANY OF AZERBAIJAN (SOCAR) IN GEORGIA 109-119

Samvel Ramazyan
THE QUESTIONS OF STUDYING OF THE HISTORISM OF

THE EPIC OF “KOROGLU” AND THE ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE XVIII CENTURY 120-152

Iranian Studies

Artyom Tonoyan
ON SOME METHODOLOGICAL FEATURES IN UNIVERSITY TEACHING OF CAUCASIAN PERSIAN (TAT) LANGUAGE 153-160

Liana Petrosyan
THE SOCIO-POLITICAL SITUATION IN IRAN UNDER THE FIRST PRESIDENTAL TERM OF MAHMOUD AHMADINEJAD (2005-2009) 161-171

Shushanna Galstyan
THE EXPERIENCE OF EXPORTING THE IDEOLOGY OF THE IRANIAN ISLAMIC REVOLUTION TO BAHRAIN 172-180

Anna Gevorgyan
THE INSTITUTE OF “MARJAYE TAQLID” AS A CORE FACTOR OF THA SHIA NETWORK 181-191

Hasmik Bianjyan
ABOUT KHAQANI SHIRVANI’S POETRY 192-198

Hovhannes Khorikyan
ON THE LOCATION OF THE XX SATRAPY OF ACHAEMENID PERSIA 199-209

Ani Nahapetyan
THE FIRST ACHAEMENIDS AND MAGIS 210-223

***

Amalya Grigoryan
KING SOLOMON AS A REAL AUTHOR OF THE SONG OF SONGS: MYTH OR TRUTH? 224-229

Tigran Grigoryan
THE SYMBOLS OF "CLAWING EAGLES" AND "HEAVENLY KINGDOMS" IN THE ART OF CHRISTIAN EAST 230-247

Հասմիկ Բիանջյան[1]

ԽԱՂԱՆԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ *պոետ, իմացություն, խոսք, գեղագիտական, ներբող*

Պարսկալեզու գրականության մեջ Աֆզալեդդին Խաղանի Շիրվանին (1120-1199) հայտնի է իր անզուգական ներբողներով: Խաղանին այն յոթ մեծ բանաստեղծներից է, ում մասին Գյոթեն գրել է. «Ասում են պարսիկները հինգ դարի իրենց բոլոր պոետներից միայն յոթ բանաստեղծ են համարել արժանավոր, բայց չէ որ խոտանվածներից շատերն ինձանից ավելի բարձր են»:[2] Խաղանիի ստեղծագործական ժառանգության մեջ առանձնահատուկ են «Էյվան-ե Մադաեն» գողտրիկ քասիդը և «Նվեր երկու Իրաքներին» պոեմը:

Նախորդ դարերի պոետների գեղագիտական գաղափարների, գրական-քննադատական մտքի ուսումնասիրության աղբյուր է հանդիսանում նրանց թողած ստեղծագործական ժառանգությունը: Այս արվեստագետների ճնշող մեծամասնությունը գրաքննադատական կամ բանաստեղծական տաղաչափության մասին աշխատություններ չի գրել: Խաղանին ևս բացառություն չէ: Սակայն այս պոետների բանաստեղծություններում և անձնական նամակագրության մեջ հանդիպում ենք հեղինակային այնպիսի դիտարկումների և քննադատական խոսքի՝ ուղղված գրչակից ընկերոջ և իր իսկ ստեղծագործությանը, որ հնարավորություն ենք ստանում պատկերացում կազմելու տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գրաքննադատական մտքի, գործող գրական չափանիշների մասին: Պոետի գնահատականներն ու դատողությունները կարևոր

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ ha.bianjyan@ysu.am

[2] Լիրիկական արևելք, Երևան,1971, էջ 90:

են նաև նրա գրական ժառանգությունն առավել հանգամանորեն ուսումնասիրելու, գրական ստեղծագործական հակումները պարզելու և հասկանալու տեսակետից: Խաղանին անվերապահորեն ընդունում է գեղարվեստական գեղագիտական ճաշակի անհատականությունը, կարևորում է գրողի կողմից բառը ճիշտ և տեղին օգտագործելու հանգամանքը, զգուշացնում մի շարք ծեծված արաբական բառերի և արտահայտությունների չարաշահումից: Խաղանին երևակայության հմայքի գագաթնակետն է համարում պոետի այն վարպետությունը, որի շնորհիվ նա կարողանում է արհեստականը վերածել բնականի՝ անընկալելի արտահայտությունները դարձնելով հասկանալի:

Խաղանիի գրական ժառանգությունն ընդգրկում է մոտ 25000 բեյթ: Նա այն բանաստեղծներից է, ում ստեղծագործությունները դժվար է լիարժեք հասկանալ՝ առանց կենսագրական դրվագներին տեղյակ լինելու: Ինչպես գրում է հայտնի իրանագետ Միխայիլ Զանդը «Կան բանաստեղծներ, որոնց պոեզիայի իսկությունն իրենց իսկ կյանքում է: Այսպիսի պոետի կյանքը նրա ստեղծագործության մեկնաբանությունն է, և ողջ ստեղծագործությունը՝ նրա կյանքի: Խաղանի բանաստեղծի պարագայում պետք է փորձել քննել նրա պոեզիան որպես բանաստեղծի կյանքի ինքնամեկնություն և ընդհակառակը՝ դիտարկել նրա կյանքը, որպես պոեզիայի ռեալ մեկնաբանություն»:[3]

Խաղանիի կյանքի մեծ մասն անցավ շիրվանշահերի «ոսկե բանտում» անգամ իրական բանտախցում՝ Շամրանի աշտարակում, և միայն կյանքի մայրամուտին նա կարողացավ հասնել բաղձալի ազատությանը՝ ընտանյոք բնակություն հաստատելով Թավրիզում:

Բնավորությամբ անհավասարակշիռ, բռնկուն, ինքնասեր Խաղանին հաշտ չէր նույնիսկ հոր հետ, իր հովանավոր և ապա

[3] Хакани, Лирика, Москва,1967, стр. 7.

նաև աներ Աբուլալա Գյանջավիի հետ, պոետ-բարեկամ Ռաշիդ Վաթվաթի հետ: Բայց միաժամանակ նա աչքի էր ընկնում արդարության իր սուր զգացողությամբ, գովերգում էր ուժեղ հույզերն ու կրքերը, սերը, ազնիվ ու վեհանձն մտքերը, այն ամենն, ինչ հատուկ է մարդուն: Պոետի աշխարհըմբռնումը բարդ է ու բազմակողմանի: Ներբողագրությունը Խաղանիի ապրուստի միջոցն էր, բայց նա հանուն դրա երբեք իր խիղճը չվաճառեց.

Ոչ, Խաղանի, քո վեհ հոգին դու մի հանիր վաճառքի,
Զգույշ, ստոր մարդկանց նման չձգտես դու սին փառքի.
Դու շահմատի թագուհու պես ծուղակ չընկնես, ով ուշիմ,
Լավ է զինվոր լինել, քան թե՝ սպարապետ մի զորքի:[4]

Իրանցի հայտնի գրականագետ Բադիազ Զամանը Խաղանիին անվանելով պարսից լեզվի գեղեցկությանը, նրբությանն ու գաղտնիքներին տիրապետող վարպետ, նրա բանաստեղծությունը համեմատում է «թռչունների դայլայլի հետ, որ ունակ էր հասկանալու միայն Սողոմոն իմաստունը»:[5] Նույն նկատառումով Եվգենի Բերտելսը գրում է. «Խաղանիի դասիդեները շոշափում են մարդկային իմացության բոլոր ոլորտները և դրանք հասկանալու համար ոչ միայն լեզվի, այլև աստղագուշակության, ալքիմիայի և այդ ժամանակաշրջանի բարդ համարվող գիտելիքների իմացություն է պահանջվում»:[6] Խաղանիի բանաստեղծական արվեստի ուսումնասիրության դժվարություններին է անդրադարձել նաև Վլադիմիր Մինորսկին՝ նշելով, որ «բանաստեղծի պոեզիան հարուստ է հազվագյուտ բառերով, անսովոր համեմատություններով և բժշկություն, աստղագիտություն, աստվածաբանություն,

[4] Խաքանի, Քառյակներ բանաստեղծություններ,Երևան,1965, էջ 21:
[5] Minorsky, V., Khaqani and Andronicus Comnenus.Reprinted from the BSOAA, 1945, x1/3: 553.
[6] Бертельс, Е.,Очерки истории персидской литературы, Ленинград, 1928, стр. 49.

պատմություն գիտություններից վայակոչումներով: Բանաստեղծի մահից երկու-երեք հարյուրամյակ անց անգամ պարսից լեզվի գիտակների համար նրա պոեմների ընկալումը դժվարություններ է հարուցել»: Խաղանիի բանաստեղծության խորը բովանդակությունն է հավանաբար դրդել Մինորսկիին հաշվելու նրա Դիվանում ընդգրկված 384 հատուկ և 265 աշխարհագրական անունները: Արևելագետի դիտարկմամբ «Խաքանիի Դիվանը Դանթեի տեքստերին հավասար լինելու արժանի ժողովածու է» :[7]

Խաղանին ստեղծագործել է պարսկերեն և արաբերեն: Նա զարգացրել ու կատարելագործել է ղազալի և ներբողի (ղասիդեի) ժանրերը: Արևելագետ Եվգենի Բերտելսը գրում է, որ չնայած ղասիդեները Խաղանիի պոեզիայի փոքր մասն են կազմում, բանաստեղծն իր փառքի համար հենց այս ներբողներին է պարտական, քանի որ այս ստեղծագործություններում է փայլուն կերպով արտահայտված այն նորը, որ ցանկանում էր ասել Խաղանին:[8] Բանաստեղծի պոեզիայի թեմատիկան սերն է, անհատի երջանկություն ու ազատությունը՝ կյանքն ինչպես որ կա: Այդ պոեզիան իր ազդեցությունն է թողել Մերձավոր և Միջին Արևելքի գրականության զարգացման վրա:

Խաղանին լավ գիտեր իր խոսքի արժեքը, և հետևելով Բուխարայի, Ղազնայի ու Խորասանի պոեզիային, ուսումնասիրելով իր նախորդների ստեղծագործությունը, այնուամենայնիվ իր բանաստեղծությունը նրանցից ավելի կատարյալ համարելով, փառաբանում է իր վարպետությունը.

شاعر مبدع منم خوان معانی مراست
ریزه خور خوان من عنصری و رودکی.

[7] Minorsky, V., Khaqani and Andronius Comnenus.Reprinted from theBSOAA,1945, x1/3: 554:

[8] Бертельс, Е., Э., Низами и Физули, Москва,1962, стр. 60.

Արարող բանաստեղծը ես եմ, իմն է սեղանը նուրբ մտքի,
Իմ սեղանի մնացորդներն են հավաքում Օնսորին ու Ռուդաքին:

կամ՝

عنصری کو یا معّزی یا سنایی کین سخن
معجزست از هر سه گرد امتحان انگیخته.[9]

Որտեղ են Օնսորին կամ Մոազին կամ Սանային, չէ՞ որ այս խոսքը
Հրաշք են, որ բոլոր երեքին էլ ծածկել են փորձությունների փոշիով:

Խաղանիի գաղափարներն անհամատեղելի էին շահական արքունիքի ցոփ ու շվայտ կյանքի իրականության հետ: Փառքի ու բարեկեցիկ միջավայրում ապրող բանաստեղծը գրում է.

Այրոց ունեմ, որ երկնքում տեղ չի անում,
Մի ողբ ունեմ՝ սրտիս խորքում տեղ չի անում.
Ասում ես թե՝ ի՞նչ վիշտ ունես, ով Խաքանի,
Ցավեր ունեմ, որ աշխարքում տեղ չի անում:[10]

Հանուն մարդու գերագույն իրավունքի՝ ազատության, պոետը պատրաստ է անգամ հրաժարվել կյանքից.

Այս անարդար բանտ-աշխարհից ուրախ գնա, ով Խաքանի,
Սա հոգսերի սրահ է մեծ, կեղծ պատկերը իրականի.
Աստված թեկուզ կյանք է տվել, բայց քեզ համար եղավ շղթա,
Ուստի կյանքդ ետ տուր նրան,ազատ գնա, ուշ չէ քանի:[11]

Խաղանին դատապարտում էր աշխարհում տիրող անարդարությունը, արձագանքում մարդկային տառապանքին և գովերգում մարդ արարածի խիզախությունն ու արժանապատվությունը, երկնային ուրախությունները:

[9] Бертельс Е., История литературы и культуры Ирана, Москва, 1988, стр. 264-265.
[10] Խաքանի, Քառյակներ բանաստեղծություններ, Երևան,1965, էջ 11:
[11] Լիրիկական արևելք, Երևան,1971, էջ 114:

Ժամանակի թելադրած պայմանները, որոնց մեջ ստեղծագործում էր Խաղանին, ստիպեցին նրան հիմնական ուշադրությունը կենտրոնացնել հատկապես խոսքի մշակույթին՝ քաղելով առավելագույնը, որ այն կարող է տալ, երբ օգտագործվում է գեղակերտ կերպար ստեղծելու համար: Մի շարք հետազոտողներ գտնում են, որ ղազալներում Խաղանին հետևել է սուֆի պոետ Սանաիի ավանդույթներին:

Մենք համակարծիք ենք Մ. Ն. Օսմանովի այն տեսակետին, ըստ որի Խաղանին այն բանաստեղծն է, ով պարսկալեզու գրականության մեջ Օմար Խայյամի փիլիսոփայական լիրիկայի ավանդույթների շարունակողն է: Բայց ի տարբերություն Խայյամի՝ զուսպ և լակոնիկ արտահայտչամիջոցներով շարադրված գաղափարների, Խաղանին՝ նոր, անսովոր ու համարձակ կերպարների ստեղծողը, իր մտքերն արտահայտում է գունագեղ, հանդիսավոր, շքեղ, հուզական խոսքի միջոցով: Խաղանիի գաղափարներն ասես թաքնված են իր գեղեցիկ համեմատությունների ու փոխաբերությունների շղարշի ետևում:[12]

Գիտնական, ազգագրագետ Նիկոլայ Խանիկովը, բնութագրելով «Խաղանիի ժամանակաշրջանը», բանաստեղծին անվանում է «իրանական Պառնասի» ամենափայլուն ներկայացուցիչներից մեկը, բանաստեղծ-մտածող, որի բանաստեղծություններն ապշեցնում են ոչ միայն իրենց ձևով, այլև հարուստ ու բազմակողմանի բովանդակությամբ: Խաղանիի Դիվանը համարում են «գրական արտահայտությունների գանձարան» նրան համեմատում են հայտնի հույն ներբողագիր Պինդարի և ֆրանսիացի նշանավոր գրող և պոետ Վիկտոր Հյուգոյի հետ:[13]

Անդրադառնալով Խաղանիի կերպարին, Ա. Վ. Բոլդիրևը գրում է. «Խաղանին անկասկած շատ հետաքրքիր է որպես պոետ և խոսքի մեծ վարպետ: Սակայն նա զարմանալիորեն հետաքրքիր է

[12] Хакани, Ветер в руке, Москва, 1968: 10:

[13] Халфин, Н.,Рассадина, Е., Н.В.Ханыков-востоковед и дипломат, Москва, 1977:180:

նաև որպես մարդ, որպես իր բազմատեսակ ժամանակաշրջանի ոգին ցայտուն կերպով մարմնավորած մի անհատականություն»:[14]

О ПОЭТИКЕ ХАКАНИ ШИРВАНИ

Асмик Бианджян

(Резюме)

В персиязычной литературе Хакани Ширвани (1120-1190) приобрел большую известность своими бесподобными, несравненными одами. Наследство поэтов прошлых веков является важным источником для исследования эстетического, литературного и критического мышления и изучения взглядоя данной эпохи.Хакани Ширвани можно отнести к таким поэтам. При чтении и анализе его произведений становится очевидным его скрупулезное отношение к выбору слов, и какое важное место занимает это «слово» в его поэтике.Он мастерски владеет «словом».

ABOUT KHAQANI SHIRVANI'S POETRY

Hasmik Bianjyan

(Summary)

Afsaleddin Khaqani Shirvani (1120-1199) is well known with his incomparable odes. He is considered to be one of the poets who inherited the creative and aesthetic ideas of poets of previous centuries. Their criticism appeared to be the origin of his literary researches. Khaqani Shirvani's literary heritage of the past is not an exception also. When reading and analyzing his works one thing is evident that how much the poet attaches importance, while choosing the correct word and its usage. Khaqani is a great master of speech.

[14] Болдырев, А., Два ширванских поэта Низами и Хагани. В книге Памятники эпохи Руставели, Ленинград, 1938:128-129: